

Գրանցված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարությունում
«14» օգոստոսի 2017 թվական
Պետական գրանցման համար 1111762
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» օգոստոսի 2017 թվական

N 256-Ն

ք. Ստեփանակերտ

**ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ
ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

«Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածին
համապատասխան

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Սահմանել սնանկության վարույթի ընթացքում հարկային և այլ պարտադիր
վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների վերաբերյալ
տեղեկատվության ձևը և լրացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող
տասներորդ օրը:

Ս. ԹԵՎՈՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ
 ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ									
Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը									
Հարկ վճարողի հաշվառման համարը									
ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ									
Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը									
Հարկ վճարողի հաշվառման համարը									
Կազմակերպության գտնվելու վայրի (անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրի) հասցեն									
ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ									
1. Պարտապանի գույքի վաճառքի (օտարման) ամսաթիվը, ամիսը, տարեթիվը			2. Պարտապանի գույքի վաճառքից (օտարումից) ստացված (փոխհատուցված) միջոցները (դրամ)			3. Անուղղակի հարկային պարտավորությունները (դրամ)			
						4. Ակցիզային հարկ		5. Ավելացված արժեքի հարկ	
6. Ընդամենը									
7. Պարտապանի գույքի վաճառքից (օտարումից), կառավարումից և տնօրինումից առաջացող լրացուցիչ այլ հարկերի և պարտադիր վճարների տեսակները						8. Հարկային և այլ պարտադիր վճարների պարտավորություններ (դրամ)			
9. Ընդամենը									
Տեղեկությունը ներկայացնող Սնանկության գործով կառավարիչ՝					Ընդունման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը				
Ստորագրությունը									

ԿԱՐԳ

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՌԱՋԱՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ

1. Սնանկության վարույթի ընթացքում հարկային և այլ պարտադիր վճարների գծով լրացուցիչ առաջացած պարտավորությունների տեղեկատվությունը (այսուհետ՝ տեղեկատվություն) լրացվում և ներկայացվում է հարկային մարմին «Սնանկության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 50-րդ և «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածներին համապատասխան:

2. Սնանկության գործով կառավարչի կողմից պարտապանի անունից տեղեկատվությունը ներկայացվում է բացառապես պարտապանի գործունեության կասեցման ժամանակահատվածում (չի ներառում գործունեության վերսկսման և առողջացման ծրագրի ժամանակահատվածները) լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջացնող գործարքների համար, միջանկյալ բաշխման ծրագիրը պարտատերերի կողմից ընդունվելու (չառարկվելու) դեպքում՝ կառավարչի կողմից հաստատվելուց հետո տասնօրյա ժամկետում, իսկ միջանկյալ բաշխման ծրագիրը պարտատերերի կողմից չընդունվելու (առարկվելու) դեպքում՝ դատարանի կողմից հաստատվելուց հետո հնգօրյա ժամկետում:

3. Տեղեկատվությունը լրացվում է դրամներով (առանց լումաների): Տեղեկատվությունն առձեռն ներկայացնելու դեպքում լրացվում է երկու օրինակից և ներկայացվում սնանկության վարույթի պարտապան հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին: Հարկային մարմնի կողմից հաշվարկի հաշվառումից (գրանցումից) հետո մեկ օրինակը վերադարձվում է:

4. Տեղեկատվության 1-ին սյունակում լրացվում է հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով գույքի վաճառքի (օտարման) ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:

5. Տեղեկատվության 2-րդ սյունակում լրացվում է պարտապանի գույքի վաճառքի (օտարման) յուրաքանչյուր գործարքից ստացված (փոխհատուցված) միջոցների ընդհանուր գումարը, որը փոխանցվել է պարտապանի սնանկության հատուկ հաշվին:

6. Տեղեկատվության 3-րդ սյունակում լրացվում են պարտապանի գույքի վաճառքի (օտարման) յուրաքանչյուր գործարքի գծով օրենքով սահմանված կարգով հաշվարկված անուղղակի հարկային պարտավորությունները, 4-րդ սյունակում ակցիզային հարկի մասով՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար, իսկ 5-րդ սյունակում ավելացված արժեքի հարկի մասով:

7. Տեղեկատվության 6-րդ տողի համապատասխան վանդակներում լրացվում են 4-րդ և 5-րդ սյունակների տողերի հանրագումարները:

8. Տեղեկատվության 7-րդ սյունակում լրացվում են պարտապանի գույքի վաճառքից (օտարումից), կառավարումից և տնօրինումից օրենքով սահմանված կարգով առաջացող լրացուցիչ այլ հարկերի և պարտադիր վճարների տեսակները, իսկ 8-րդ սյունակում՝ պարտավորությունների համապատասխան գումարները:

9. Տեղեկատվության 9-րդ տողում լրացվում է 6-րդ տողի վանդակների և 8-րդ սյունակի տողերի հանրագումարը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ